



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

10.05.2016թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետ
Գաբրիել Գյոզայանին
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն **Գյոզայան,**

«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2015թ. որքա՞ն գումար է հատկացրել Արագածոտնի մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2015թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գրիշա Բալասանյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ**

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak. V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

_____ N _____
Ի պատրասխան Ձեր 10.05.2016թ.գրության

**<<Հեղաքննող լրագրողներ>> հասարակական
կազմակերպության նախագահ,
<<Հեղք>> թերթի լրագրող
պարոն Գ. Բալասանյանին**

Հարգելի պարոն Բալասանյան

2015 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ՀՀ Արագածոտնի մարզին առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար, հատկացրել է 300.0 մլն. ՀՀ դրամ, որից 7.0 մլն. ՀՀ դրամը հատկացվել է համայնքներին՝ որպես կապիտալ սուբվենցիա, իսկ 50.0 մլն. ՀՀ դրամը՝ որպես ընթացիկ սուբվենցիա համայնքներին:

Մնացած 243.0 մլն. ՀՀ դրամը, որի մեջ ներառված են նաև նախագծահետազոտական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծախսերը՝ ուղղվել են մարզի համայնքներում 24 շինարարական ծրագրերի իրականացմանը:

Յուրաքանչյուր ծրագրի համար կապալառու կազմակերպության ընտրությունը կատարվել է օրենքով սահմանված կարգով՝ մրցութային եղանակով: 2015թ.նախատեսված ծրագրերն ամբողջությամբ ավարտված են:

Կից ներկայացնում ենք շինարարական ծրագրերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը:

Առդիր՝2 էջ:

Հարգանքով

Գ.ԳՅՈՂԱԼՅԱՆ

N/N	Օբյեկտի անվանումը	Հատկացված գումար	Կապալառու կազմակերպության կողմից կնքված պայմանագրով գումարը	Կապալառու կազմակերպության անվանումը
1	<u>Շենքերի և շինությունների շինարարություն</u>			
	<u>որից՝</u>			
1,1	Ներքին Բազմաբերդ համայնքի խմելու ջրագծի կառուցում	30,000.0	29,100.0	<<Գրեդշին>>ՍՊԸ
1,2	Արագածոտն համայնքի ներհամայնքային կոյուղագծի կառուցում	6,000.0	5,700.0	<<ՎԷՌԼ>>ՍՊԸ
1,3	Կարմրաշեն համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	3,500.0	3,300.0	<<Գրեդշին>>ՍՊԸ
1,4	Օշական համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	10,000.0	9,600.0	<<ՎԷՌԼ>>ՍՊԸ
1,5	Արագածավան համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	6,000.0	5,700.0	<<ՎԷՌԼ>>ՍՊԸ
1,6	Ներքին Սասունաշեն համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	8,000.0	7,600.0	<<Գրեդշին>>ՍՊԸ
1,7	Կաքվաձոր համայնքի փողոցային լուսավորության ցանցի կառուցում	6,730.0	6,500.0	<<Գրեդշին>>ՍՊԸ
2	<u>Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում</u>			
	<u>որից՝</u>			
2,1	Աշտարակ քաղաքի Պոռոշյան փ. թիվ 10 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	10,329.0	10,000.0	<<Գրեդշին>>ՍՊԸ
2,2	Թալին քաղաքի Խանջյան փ. թիվ 28 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	13,400.0	12,800.0	<<Խապարտշին>>ՍՊԸ
2,3	Ապարան քաղաքի Բաղրամյան փ. թիվ 22 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	7,306.0	7,100.0	<<Տող Աստղ>>ՍՊԸ
2,4	Ապարան քաղաքի Գ. Նժդեհի փ. թիվ 13 բազմաբնակարան շենքի տանիքի հիմնանորոգում	12,500.0	12,100.0	<<Տող Աստղ>>ՍՊԸ
2,5	Ռիշի համայնքի մշակույթի տան վերանորոգում	3,500.0	3,300.0	<<Գրեդշին>>ՍՊԸ

2,6	Սորիկ համայնքի մշակույթի տան և գյուղապետարանի շենքի նորոգում	6,000.0	5,700.0	<<Վահագն>>ԱԿ
2,7	Ոսկեհատ համայնքի մշակույթի տան բարեկարգում և վերանորոգում	3,000.0	2,900.0	<<Աշկար>>ՍՊԸ
2,8	Արտաշատավան համայնքի մշակույթի տան վերանորոգում	5,000.0	4,700.0	<<Աբակ>>ՍՊԸ
2,9	Օրգով համայնքի համայնքային կենտրոնի շենքի վերանորոգում	3,500.0	3,350.0	<<Աշկար>>ՍՊԸ
2,10	Քուչակ համայնքի մարզադպրոցի հատակի նորոգում և ջեռուցման համակարգի կառուցում	5,000.0	4,850.0	<<Աբակ>>ՍՊԸ
2,11	Ապարան քաղաքի մարզադպրոցի վերանորոգում	4,235.0	4,100.0	<<Ցող Աստղ>>ՍՊԸ
2,12	Արագածավան համայնքի թիվ 3 մանկապարտեզի վերանորոգում	10,000.0	9,700.0	<<Աբակ>>ՍՊԸ
2,13	Արտենի համայնքի մանկապարտեզի խոհանոցի նորոգում	1,500.0	1,460.0	<<ՎԷՌԼ>>ՍՊԸ
2,14	Ագարակ համայնքի բուժամբուլատորիայի նորոգում	4,500.0	4,250.0	<<Վթարշին>>ՍՊԸ
2,15	Բյուրական համայնքի ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգում	25,000.0	23,900.0	<<Աշտարակշին>> ԲԲԸ
2,16	Կարբի համայնքի ներհամայնքային ճանապարհի հիմնանորոգում	25,000.0	23,900.0	<<Աշտարակշին>> ԲԲԸ
2,17	Թալին համայնքի Սայաթ-Նովա փողոցի հիմնանորոգում	25,000.0	24,100.0	<<Էդիկ և Վաչիկ>> ՍՊԸ

<< Արագծոտնի մարզպետարանի աշխատակազմի

քաղաքաշինության վարչության պետ՝

Ա.Դավայան